

Մշակութային և Հասարակական
Երկարաթարթեր

Յոյս

1200 թուման
Հայաստանում 320 դրամ



ԱԺ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ 2012

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 «Յոյս»-ը թեևակոխում է հրատարակման 6-րդ տարին
- 3 Մեծ եղեռնի զոհերի ոգեկոչման միջոցառում «ԲաՖՖի» համալիրում
- 4 «Փիւնիկ» մանկապատանեկան ասմունքի երեկոյ Վերժիկ Մահմուդեան
- 5 Հարցազրոյց աշուղ Ճատուրօլու հետ
- 14 Զոկլած երամից Կոլիա Տէր Յովհաննիսեան
- 17 Հարցազրոյց Լիլիթ Պիպոյեանի հետ Լիլիթ Ամիրխանեան
- 20 Նուրի Բիլգէ Զէյլանի յուանկարները
- 22 Խոհանոց. Թաբուլէ
- 23 Տնտեսուհու անկիւն Քաթրին Եաղուբի
- 24 Մարզանք Արման Տէր Ստեփանեան

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

6-րդ տարի, թիւ 121, Մայիս 2, 2012,
1200 թուման
Հայաստանում 320 դրամ



8 Աժ քննարկութիւններ 2012

- 8 Ի՞նչ են ասում ու լսում քաղաքական ուժերը Սուրէն Մուսայէլեան
- 12 Համամասնական / մեծամասնական
- 13 ՀԱԿ. ձայն չտալ «հանցաւոր իշխանութիւններին»

Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

2	Այս համարի հայերէն էջերում	դպրոցը Լիա Խաչիկեան	11	Ռոբերտ Սաֆարեան
4	Թաւրիզի թեմական դպրոցի առաջին աշակերտը Տաճատ Պողոսեան	8 Լուսանկարներ Արթի Մովսէսեան	13	Գիրք. Հայերի ինքնութիւնը փոփոխուելու աշխարհում Մոհամմադ Ռասուլի
6	Մարգիս Զանբազեանը եւ Թեհրանի առաջին Բալէի	10 Հայոց ցեղասպանութիւնը եւ մշակոյթի ու քաղաքականութեան շուկան		Իրանահայ բանաստեղծ՝ Արմէն Չեղը

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտոնատէր՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմէն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայէլեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմէն Ազարեան</p> <p>Կայք՝ Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
---	---	---	---

«ՅՈՅԱ»-Ը ԹԵԻԱԿՈՒՄՈՒՄ Է ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ 6-ՐԴ ՏԱՐԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ, ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ռոբերտ Սաֆարեան

«Յոյս»-ի առաջին համարը լոյս է տեսել 2007 թվականի Մայիսի 2-ին: Այսօր թերթիս 121-րդ համարի հրատարակութեամբ սկսում ենք մեր աշխատանքի 6-րդ տարին: Երբ յետ ենք նայում ու հայեացք նետում անցած ճանապարհին, տեսնում ենք, որ նոյնիսկ իրանահայութեան պէս մի փոքր համայնքի մի փոքրիկ հրատարակութիւն, ինչպիսին է «Յոյս»-ը, ստեղծել ու յարատեւել է մեծ թուվ մարդկանց՝ գրողների, հասարակական գործիչների, համայնքային ղեկավարների, գրասենեակային կազմի, տպարանի եւ լիտոգրաֆիայի աշխատաւորների ջանքերով:

Անկասկած, «Յոյս»-ի կանոնաւոր հրատարակութիւնը ի սկզբանէ հնարաւոր չէր դառնայ, եթէ չլիներ թերթի արտօնատէր, ազգային գործիչ եւ բարերար Լեւոն Ահարոնեանի նիւթական եւ բարոյական անխնայ ներդրումը:

Հարկ ենք զգում շնորհակալութիւն յայտնել գրողներ Ազատ Մաթեանին, Կոլիա Տէր Յովհան-նիսեանին, Խաչիկ Խաչերին, Գարուն Սարգսեանին, Անդրանիկ Սիմոնեանին, Անդրանիկ Խեչումեանին, Արմինէ Մելիք-Իսրայէլեանին, Շաքէ Պետրոսեանին, Լիդա Բերբերեանին, Ալինա Թարվերդեանին, Անուշ Աղաջանեանին, Յովիկ Մինասեանին, Անդրանիկ Հովուեանին, Հրաչ Միրզախանեանին, Ալբերթ Բեգիջանեանին, Ռուբիկ Սարգարեանին, Շանթ Բաղդամեանին, Դևիդ Գալստեանին, Գուրգէն Արզումանեանին, Լիլիթ Ամիրխանեանին, Ռազմիկ Ամիրխանեանին, Սեդրակ Գոջանեանին, Արազ Բարսեղեանին, Արփինէ Սիմանեանին, Նորվանին, Վարուժ Սուրենեանին եւ Աշուղ Ծատուրօղլուն, որոնք իրենց գրութիւններով հարստացրել են թերթիս բովանդակութիւնը:

Շնորհակալութիւն ենք յայտնում բոլոր նրանց, ովքեր պատիւ տւին մեզ՝ պատասխանելով մեր հարցերին եւ մասնակցելով մեր կլոր սեղաններին: Յատկապէս շնորհակալութիւն ենք յայտնում սրբազան հայր Սեպուհ Սարգսեանին (երկու անգամ «Յոյս»-ի հետ հարցազրոյցի նստելու համար), ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Գրիգոր Արաքելեանին եւ նրա կնոջ Փառանծեմ Արաքելեանին, ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչ Վիգէն Բաղումեանին, Թեմական Խորհրդի ատենապետ Էդարդ Բաբախանեանին, ՊԺ-ի պատգամաւոր Ալբերթ Քոչարեանին, մեր Կլոր սեղաններին մասնակցած հիւրեր՝ Արտեմ Օհանջանեանին, Հրաչ Ստեփանեանին, Սերգէյ Բասեղեանին:

Անձամբ շնորհակալութիւն են յայտնում թերթիս անձնակազմի անդամներ, սրբագրիչ եւ լեզուային խմբագիր Քարմէն Ազարեանին, գրաֆիստ եւ զեղարւեստական ձեւաւորման պատասխանատու Լիա Խաչիկեանին, քարտուղարուհի եւ բաժանորդագրման ու ցրման հարցերի պատասխանատու Քաթրին Եղոլբեանին, պարսկերէն էջերի սրբագիր Նասիմ Նաջաֆիին, մեր երիտասարդ աշխատակիցներ Արման Տէր Ստեփանեանին եւ Քաչիկ Սաֆարեանին, միւս աշխատակիցներ Իշխան Իբրանուսեանին, Ալիոնա Սանագուին եւ տպարանի ու լիտոգրաֆիայի աշխատողներին: Ինչպէս նաեւ մեր նախկին աշխատակիցներ Վաչիկ Վարդանեանին, Ժիրայր Մնացականեանին, Վանէ Տէր Պետրոսեանին, Էլմա Վարդանեանին, Թալին Վարդանեանին, Ազնէս Ազարեանին եւ Արթուր Ազարեանին, որոնցից ոմանք արդէն չեն եւ Ամերիկա:

Շնորհակալութիւն բոլոր նրանց, ովքեր իրենց քննադատութիւններով, խորհուրդներով, ցուցմունքներով եւ քաջալերանքներով, աջակցել են մեզ:

Եւ ի վերջոյ շնորհակալ ենք թերթի հաւատարիմ ընթերցողներից եւ բաժանորդագիրներից, որոնք «Յոյս»-ի գլխաւոր յենակէտն են հանդիսանում:

Ներողութիւն ենք խնդրում բոլոր նրանց, որոնց անունը հաւանաբար դուրս է մնացել վերոյիշեալ ցանկից, եւ շնորհակալութիւն ենք յայտնում նաեւ նրանց: Յուսով ենք, որ բոլորն էլ ապագայում չեն խնայի իրենց աջակցութիւնը՝ «Յոյս»-ը առաւել ճոխ ու հարուստ էջերով հրատարակելու համար:

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՉՈՂԵՐԻ ՈԳԵԿՈՉՍԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Հ.Մ.Մ. «ՐԱՖՖԻ» ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Ուրբաթ, Ապրիլի 27-ի երեկոյեան Հ.Մ.Մ.«Րաֆֆի» համալիրի «Մասիս» սրահում կայացաւ Մեծ Եղեռնի 97-ամեակին նւիրւած միջոցառում, որին ներկայ էին Թեհրանի Հայոց Թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի ատենապետ պրն. Գէորգ Աբուլեանը, Թեմական խորհրդի անդամներ, ազգային մարմինների, թեհրանահայ միութիւնների ու մամուլի ներկայացուցիչներ եւ հոծ թւով հայրենակիցներ:

Չեռնարկի առաջին բաժնում ցուցադրւեց «Արմին Վեզներ. Ցեղասպանութեան լուսանկարիչ» ֆիլմը, որից յետոյ միութեան Սկանութեան, կանանց եւ այլ բաժանմունքների անդամների միջոցով կատարւեց ծաղկեմատոյց՝ Արարատ լեռան պատկերի ստորոտին դրւած խորհրդանշական խաչքարերի եւ Հրանտ Դինքի լուսանկարի առջեւ: Այնուհետեւ միութեան «Մեղեդի» երգչախումբը՝ տկն.Այիդա Փանոսեանի խմբավարութեամբ եւ տկն.Անգինէ

Հայրապետեանի նւագակցութեամբ, կատարեց Տէրունական աղօթքը եւ ՀՀ հիմներգը, որից յետոյ օրւայ առիթով արտայայտւեց Իւլ. Ազատ համալսարանի հայոց լեզւի եւ գրականութեան ամբիոնի դասախօս տկն. Քարմէն Ազարեանը: Միջոցառման գեղարւեստական բաժնում նախ ելոյթ ունեցաւ «Մեղեդի» երգչախումբը, որից յետոյ միութեան ասմունքի խմբի անդամներ՝ Արթին Բաղումեանը, Մեղրի Բուդա-ղեանը, Էդիկ Մեհրաբեանը, Անի Անդրեասեանը եւ Փիւնիկ Խուդավերդեանը ներկայացրին հատուածներ Պարոյր Սեւակի «Եռածայն Պատարագ»-ից, որը մեծ տպաւորութիւն գործեց հանդիսատեսների վրայ: Գեղարւեստական բաժնում երկու

պարերով հանդէս եկաւ նաեւ միութեան «Անի» պարախումբը՝ տկն. Կարինէ Մանուչեհրեանի ղեկավարութեամբ, իսկ պրն.Ժորժ Հայրապետեանը կատարեց «Ադանա» երգը: Հարկ է նշել, որ բեմը զարդարող Արարատ լեռան հսկայական գեղեցիկ պատկերը եւ խաչքարերը պրն. Ժորժ Հայրապետեանի ղեկավարութեամբ, միութեան երէցների բաժանմունքի աշխատանքի արդիւնքն էին:

Թղթակից



«Սիլվան հայ ժողովրդի հին եւ նոր պոեզիայի չքնաղ ծաղկեփունջի մէջ մի նոր գեղեցիկ ծաղիկ իր սեփական գոյնով եւ իր սեփական բոյրով եւ անթառամ:»

Աւետիք Իսահակեան

«ՓԻՆԻԿ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՍՄՈՒՆՔԻ ԵՐԵԿՈՅ

Վերծիկ Մահմուդեան

Հինգշաբթի եւ ուրբաթ Ապրիլի 19 եւ 20-ի երեկոյան հայ բարեգործական ընդհանուր միութեան սրահում տեղի ունեցաւ գրական-գեղարուեստական գեղեցիկ մի ծեռնարկ՝ «Փինիկ» մանկապատանեկան գրական խմբի միջոցով: Ձեռնարկը ընդգրկում էր հայ մեծ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանի գրչին պատկանող մի շարք յայտնի ստեղծագործութիւններ՝ «Խօսք իմ որդուն», «Հող հայրենի», «Կարօտի կանչ», «Ձիւն», «Հոգեհանգիստ»... որոնք արտասանւեցին խմբակային, առանձին եւ դուետի ձեւով:

Մանուկները արտասանեցին շատ վարպետօրէն ու սահուն, որը

փաստն էր իրենց հետ կատարած լուրջ եւ հոգատար աշխատանքի: Արտասանութիւնների ունկնդրելու ընթացքում հանդիսատեսը դիտում էր Հայաստանի բնութիւնից եւ տեսարժան վայրերից պատրաստած գեղեցիկ պատկերներ ու լսում հայ մեծ երաժիշտներին պատկանող մեղեդիներ:

Պատկերների ստեղծման խնդրում եւ տեխնիկական հարցերում խմբին օգնել էր Թոմիկ Քեշիշեանը:

Ծրագրի վերջում բեմ բարձրացաւ խմբի ղեկավար Անգինէ Վարդանեանը եւ արտասանեց Ս.Կապուտիկեանի «Յուշերի երեկոյ» բանաստեղծութիւնը, որը հեղի-

նակը նւիրել էր Աւետիք Իսահակեանին: Օրդ. Վարդանեանը այդ ստեղծագործութիւնը նւիրեց հանգուցեալ ուսուցիչ, իր վարպետ Պրն. Միշա Հայրապետեանին, եւ այնուհետեւ շնորհակալութիւն յայտնեց այն մարդկանց, որոնք օժանդակել էին նրան այս աշխատանքներում, «Փինիկ» մանկապատանեկան գրական խմբի անդամներն են, Անուշ Տէր Յովհաննիսեան, Սասուն Սարգսեան, Մեղրի Սարխաշեան, Նարէ Տէր Մկրտչեան եւ Արգին Թորոսեան:

«Փինիկ»-ին մաղթում ենք կատարեալ յաջողութիւն:



ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑ ԱՇՈՒՂ ԾԱՏՈՒՐՈՂՆՈՒ

ՀԵՏ

Քեզ Զողա ու Շահինշահ,
Խանը՝ Թեհրան եմ չեզ ասում



Գարնանային արձակուրդների ընթացքում բախտն ունեցանք մեկ անգամ եւս հանդիպելու հանրայայտ աշուղ Ծատուրօղլուն եւ առիթը օգտագործելով, շահեկան զրոյցի նստեցինք նրա հետ ազգային մի շարք խիստ հրատապ խնդիրների շուրջ, որը սիրով յանձնում ենք ընթերցողների ուշադրութեանը:

Խմբագրութիւն

- Բարեւ ձեզ, պրն. Ծատուրօղլի, ներողամիտ եղէք, որ այս գեղեցիկ գարնանամուտին անգամ զրկում ենք ձեզ բնութեան այս շքեղ զարթօնքը վայելելու հաճոյքից եւ որպէսզի...

- Թոյլ են տալիս, օր անցնէք բուն նիւթին:

- Յարգելի աշուղ, բոլորովին վերջերս «Շանթ»-ի «Ազատ գօտի» ծրագրում Հայաստանի աշուղներն ու մասնագետները քննարկում էին, թէ աշուղ եւ գուսան բառերից ո՞րն է հայերէն, եւ ազգային անվտանգութեան տեսակէտից ո՞րն է ճիշտ ու նպատակայարմար: Կուզենայինք իմանալ ձեր հեղինակաւոր կարծիքը: Եւ դուք ինքներդ ձեզ աշուղ էք համարում, թէ՞ գուսան:

- Էդ էլաւ երկու հարց, բաւքամ էլ իրեք: Իմ կարծ խելքով են ինչ ճիշտ է, նպատակայարմար չէ, են էլ օր նպատակայարմար է, ճիշտ չէ:

- Եթէ չեն սխալւում դրանք Սաադիի խօսքերն են...

دروغ مصلحت آمیز به از راست فتنه انگیز

- Խնդրեն, համնեցէք, մենք հենց ինչ ասեցինք, ասիք օտարներունն է: Հիմնի էլ կպել էք ես աշուղին ու գուսանին: Եանի ուզում էք ասէք մենք հենց օնջի՞նչ:

- Քաւ լիցի, խնդրում են ինձ սխալ չհասկանաք, պարզապէս մտքերի նմանութիւն կար:

- Կարող է պատահի, ես էդ խօսքերը ջահել ժամանակ օր էրթում ի Հնդկաստան, կարդացել են Շիրազի հայկական եկեղեցում պահուղ հիմնգերորդ դարի ձեռագրից: Ասում է. «Լաւ է զուտ նպատակայարմար, քան զճիշտ խռովարար»: Հաստատ Սաադին էլ էդ ձեռագրից է վեկալի:

- Բայց Սաադին հայերէն գիտէ՞ր:

- Էդ եկեղեցու տէրտէրի մօտ դասի էր էրթում:

- Հիմա այդ ձեռագիրը կա՞յ:

- Մէ քանի տարի առաջ էդ ձեռագիրը Շիրազից փոխադրեցին Ջուղու վանքը, հիմնի թէ թողած ըլնեման, կայ:

- Բայց դա ճի՞շտ է:

- Նպատակայարմար է:

- Հետաքրքիր է, բայց կարծեմ մենք բուն նիւթից մի քիչ շեղեցինք: Խօսքը աշուղի եւ գուսանի մասին էր, հիմա դրանցից ո՞րն է հայերէն:

- Էրկուսն էլ մաքուր հայերէն են:

- **Բայց, կարծես Հայաստանի մասնագետներն ասացին, գուսանը հին պարսկերեն է, աշուղն էլ արաբերեն:**

- Համմեցեք, էդ էլ մեր մասնագետները, ասա, այ՛ մարդ, թե իմանում էք, օր ոչ մեկն էլ հայերեն չէ, բա էլ ի՞նչ էք իրուր գլխի տալիս, էն էլ թելեվիզեոնի մեջ: Չէ՞ք հաւատում, գնացեք, ո՛ր պարսիկին ուզում էք, հարցրեք՝ *գուսան* եանի ի՞նչ, թե իմացաւ ես անունս կը փոխեն: *Աշուղն* էլ մաքուր հայերեն է, *աշել* հայերեն նշանակում է նայել, ուրեմն, *աշուղ* եանի *նայող*:

- **Բայց Ազատ Մաթեանը «Պայման»-ի մեջ գրել էր, որ աշուղը հենց «աշեղ» բառն է, որ նշանակում է սիրահար եւ մենք թուրքերենից ենք վերցրել:**

- Ազատ Մաթեանը գլուխը քարն է տալիս: Ախր մարդ մինչեւ չնայի ու չտեսնի, քռռեքոռ մո՞նց է սիրահարուում: Չէք լսի օր ասում է. Չուն դնեն թաւեն խաշեն, Նստեն երեսդ աշեն, Համայակ ջան:

- **Իսկապէս, խօսեցիք անունը փոխելու մասին, ձեր անւան վերջաւորութիւնն էլ «օղլի» թուրքերեն չի՞:**

- Չէ՛, լաւ էլ հայերեն է: Չարմահալ մենձ աշուղ ենք ունեցի, Հարթունօղլի, Ջուղա ունեցել ենք Բաղդօղլի, Քեօնօղլին էլ հաստատ հայ էլի, Սայեաթ Նովէն, Ջիւլանին, Հաւասին, ըտոնք թամամն էլ հայ են էլի, իրանց անուններն էլ զուտ հայկական է: Հիմի մասնագետները ինչ կուզեն ասեն: Թումանեանը, Նալբանդեանը, Շահագիզը, Շիրանգաղէն, Շիրազը, Ալիխանեան եղբայրները, ո՞ր մեկն ասեն:

- **Դէ, անցեալներում տարբեր էր, հիմա ունենք ազատ անկախ պետութիւն: Անյարմար չէ՞ք զգում, որ ձեր եւ Թուրքիայի արտաքին գործոց նախարարի անունները նոյն վերջաւորութիւնն ունեն:**

- Օր վո՞վ ըլնի:

- **Դաւութօղլուն:**

- Լաւ օր փորփրեք, կը տեսնէք օր էդ էլ էդ թաքուն հայերուց է: Հօր անունը Դաւութ էլի, չարմահալցիք էլ Դաւիթին ասում ին Դաւութ: Արտեօմ Երկանեանին պիտի դրկենք սորաղը, թահ ու թուիը հանի, տեսնենք էդ անունը որդից է բերի:

- **Հիմա դա ճիշտ է, թէ՞ նպատակայարմար:**

- Ճիշտ ու սուտը չեմ գիդի, համա հաստատ նպատակայարմար է: Թուրքերն օր իմանան իրանց արտաքին գործոց նախարարը թաքուն հայ է, համ Դաւութօղլին աչքից կընգնի, համ էլ թուրքերու սիրտը կասկած կընգնի, կասեն, չըլնի մեր մենձերը թամամ հայ են ու մենք խաբար չենք, թամամ կը խառնուեն իրուր:

- **Իսկապէս, չէ՞ք կարծում, որ աւելի լաւ կը լինի, որ գոնէ մեր գրողները, քաղաքական գործիչները եւ ընդհանրապէս ղեկավարութիւնը իրենց անուն ազգանունը հայացնելով, օրինակ ծառայեն նոր սերնդին:**

- Բահ, բահ, ճիշտ են ասում, օր խելքը մեծ ու պստկի չունի: Իսկապէս օր ազգային անվտանգութեան տեսակետից շատ-շատ խելացի առաջարկութիւն է: Ու շատ լաւ կըլնի, օր էդ բանը վիրեւից սկսենք:

- **Ինչպէ՞ս թէ վերելից:**

- Թեմականից, Պատգամաւորականից, յատկապէս մեր զոյգ մեջլիսի պատգամաւորներից: Թէ իտոնք խօսքը մէկ անեն ու մէ ըտենց ազգաշահ որոշում տան, վրայ իմ աչքին, ես էլ իմ անունը կը փոխեն, համա ճիշտն ասած, աչքս ջուր չէ խմում:

- **Բայց ինչո՞ւ էք կարծում, որ մնան համազգային նշանակութիւն ունեցող հարցում նրանք համաձայնութեան չեն գայ:**

- Ասեմ, աղջիկ ջան, ասեմ: Ախր թեմերը իրուր հետ անունի կռիւ ունեն: Երկու շրջան էր, օր ջուղեցիք Բեգլարեանին ին դրգում մեջլիս: Ըտեղ թեհրանցիք ու թաքրիզեցիք քիչ ին բերում, էտ էր օր էկան առաջ Բաբախանեանին դրին թեմականի նախագահ, ետոյ էլ Խանլարեանին դրգեցին մեջլիս, եանի թէ, տեւեք, թէ ձերը մէկ է ու բեգ, մերոնք երկու են ու երկուսն էլ խան են: Հիմի Ջուղեցիք մնացել են մաթալ, օր ինչ անեն: Դարբեդար ման են գալիս թեմականի նախագահ ճարեն, օր շահ ըլնի, իհարկէ Շահնագարեանին ունէին, ձեռներից դուս էլաւ, փոխադուեց Թեհրան, հիմի դէս ու դէն են ընկնում, բալքի կարողանան ետ տանեն Ջուղա ու նորից նստեցնեն թեմականի թախտին, օր կարողանան կշեռքի երկու թաթերը ի՞նչ անեն, հաւսրեն:

- **Ցնցող նորութիւն էր: Ուրեմն, ինչպէս ասացիք, վերելից յոյս չկայ, իսկ ցածից ձեր կարծիքով կարելի՞ է մի բան անել, այսինքն խնդիրը տանենք ժողովրդի մէջ եւ նրան պայքարի դուրս բերենք այդ ֆեոդալական մնացուկների դէմ: Կարող ենք թերթերում ու կայքերում յօդւածներ դնելով միտք պատրաստել: Ժողովրդին հասկացնենք, որ վերջապէս շահերի, բեգերի ու խաների ժամանակն անցել է:**

- Հա, բարիքեալլա: Էդ գործը պիտի տանք Սաֆարեանի ու Սարդարեանի ու Քեշիշեանի ու ըտոնց ձեռը: Միրզախանեանին էլ ասենք մէ երկու դանա տռուզ յօդւած տայ թերթին:

- **Իսկ պարոն Մելիքեա՞նը:**

- Չէ՛, Մելիքեանը իշխանամէտ է:

- Բայց մի րոպե, պարոն Ծատուրոլի, ինձ թոււմ է, թէ դուք ինձ ձեռ էք առնում, որովհետեւ այդ անունները որ ասացիք, նախ իրենք պիտի փոխեն:

- Հայ բարիքեալլա, էրեւում է, օր խելքդ շուտ է վրայ գալիս: Ձեր նման աչքաբաց սերունդ, օր ունենք, էլ ի՞նչ դարդ ունենք: Ամօթ չըլնի հարցնելը, օրիորդ ջան, քու անունն ի՞նչ է:

- **Ռայնոմիտա:**

-Բահ, բահ, բահ, շատ սիրուն անուն է, լաւութունն էլ էն է, օր օնցով չի կարայ ասի, հայկական է, թուրքական է, թէ ինչական: Նոր սերունդը իրա լուծումը եանի *ռահալլը* գտել ա:

- **Պարոն Ծատուր...**

- Ծատուրոլի:

- **Լաւ, պրն. Ծատուրոլի, ինչպէս երեւում է այս խնդիրը, շատ ջուր վերցնող խնդիր է:**

- Բա ինչ է, Ռոդինա, Իռենտիա, Ռոմին..., աղջիկ ջան, իսկի մտածե՞լ ես, օր թէ «Ազգային Իշխանութունից» խանը կտրենք տակն ինչ կը մնայ: Չէ՛, բալամ, էդ ըլնելու բան չէ: Մէ բան մտածէք, օր բան ըլնի:

- **Լաւ, եկէք դրանից անցնենք, հիմա կարող էք համառօտ կերպով ասել ձեր կարծիքը խորհրդարանական ընտրութիւնների մասին:**

- Խոք ես մէ հարցին պիտի երգով պատասխանեմ:

Անգաջ արէք, հայ ժողովուրդ, գարմանք մէ բան եմ ձեզ ասում,
Էրկու նմանանդա ունենք, դուրբան ու ջան եմ ձեզ ասում,
Մէկը Բէգ ու Բէգլարս է, մէկը Խան ու Խանլարս է,
Էրկուսն էլ ուսումնական, խելքի մաքան եմ ձեզ ասում:

Աչքով չտամ, մէ լաւ նայէք մեր Բեգլարին ու Խանլարին,
Իրուր մէջքը մէջքի տւած պստիկ ու մենձ Մասիս սարին,
Ով նայում է, գարմանում է. «Ռրտեղի՞ց եմ իստոնց ճարի»
Բէգը Ջուղա ու Շահինջահր, Խանը՝ Թեհրան եմ ձեզ ասում:

- **Պարոն Ծատուրոլի, դուք որ այդպէս գովք էք ասում, բայց որոշներն ասում են, այս ընտրութիւնները դեմոկրատիկ չեն, որովհետեւ ամէն շրջանում միայն մէկ թեկնածու է եղել:**

-Միք հաւատայ, էդ վո՞վ ա ասում, - մեր վիճակը թա-

րի՞Ֆ չունի,

Ի՞նչ ընտրութիւն, երբ թեկնածուն մրցակից ու հարի՞Ֆ չունի,

Ի՞նչ հայութուն, օր իրա մէջ, ձախ ու աջի կռիւ չունի,- Մեր համայնքը, փա՞ռք Աստըծու, միասնական եմ ձեզ ասում:

Եփ թեկնածուն խան ու բեգ է, էլ ինչ հարի՞Ֆ ու մրցակից,

Ծանդր բեռը էն կը շալկի, օր կարենայ դուս գայ տկից,

Թէ չէ, ի՞նչ էք մի խցկում ուղտի նման ասդի ծակից, Ընտրելը Ռոստամ Ջալի, ես օխտը խան եմ ձեզ ասում:

- **Դուք որպէս աշուղ շրջում էք ժողովրդի մէջ, նրանք ի՞նչ ակնկալիք ունեն գոյգ պատգամաւորից:**

- Մահլաթըն ու Մէրդան թաղը, Նարմաքըն ու Մաջիդի-էն,

Չորեք դիմեն հարց եմ տալի. բա ի՞նչ էլաւ հայի «դիտ»-ն,

Ի՞նչ էք ուզում, ա՛յ ժողովուրդ, նաղդն էք ուզո՞ւմ, թէ՞ նսիեն,

Ես անգամայ ընտրութունը բարի նշան եմ ձեզ ասում:

- **Ձեր պատգամը, եթէ կարելի է:**

- Ծատուր, բոլ է ինչ քաշեցիմք օտար խան ու բեգի ձեռից,

Իստից դէնը արիք անձէն ինչ քաշում ենք, քաշենք մերից,

Ինչ էլ չըլնի, մեր խիզանն են, անկախ իրանց անուններից,

Անունների վերջի «եան»-ը ես հայկական եմ ձեզ ասում:

- **Շատ շնորհակալ եմք ձեր բարի խորհուրդների համար:**

- Ինդրեմ, նորից համմեցեք:



ԱԺ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մայիսի 6-ին Հայաստանում խորհրդարանական ընտրություններ են լինելու: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները քվեարկելու են ընտրելու համար Ազգային Ժողովի (ԱԺ) 131 պատգամաւորներին: Արդէն ամիսներ է, ինչ սկսել է քաղաքական զանազան հոսանքների մրցակցությունը եւ իւրաքանչիւր խումբ բարձրաձայն խոստանում է ժողովրդին, թէ իր յաղթանակի դէպքում, բարելաւելու է երկրի վիճակը: Բոլոր կուսակցություններն էլ յայտարարում են թէ իրենք կողմ են ժողովրդավարության, դէմ են կաշառակերության եւ տնտեսական մոնոպոլիզիայի, եւ ամէն բան անելու են բարելաւելու ժողովրդի սոցիալական վիճակը: Նոյնիսկ դաշնակցականները իրենց ընտրաընկերներին շատ քիչ բան են ասում Ղարաբաղի հակամարտության, ցեղասպանության ճանաչման եւ պահանջատիրության մասին: Կարծես բոլորն էլ լաւ գիտակցում են, որ եթէ ցանկանում են ձեռք բերել հասարակ ժողովրդի ձայնը, պետք է կենտրոնանան նրանց առօրեայ անմիջական հարցերի վրայ: Իսկ թէ ստոյգ ի՞նչ են ասում քաղաքական ուժերն ու ի՞նչ քննադատություններ է հնչում նրանց դէմ, ներկայացւած է «ԱրմենիաՆաու» կայքի խմբագրի տեղակալի շահաւէտ յօդուածում, որը ներկայացնում ենք ստորեւ:

Հայաստանի խորհրդարանական ընտրությունները կատարում են համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերի հիման վրայ: Ընտրարշաւի առաջին փուլում երկրի կարեւոր քաղաքական ուժերը պահանջեցին, որ ընտրությունները կատարեն ամբողջովին համամասնական կարգով, այսինքն՝ կուսակցությունների կողմից ներկայացւած ցանկերի հիման վրայ: Այս առաջարկը չընդունեց ԱԺ-ի կողմից, սակայն հարցը շարունակելու է քննարկել յաջորդ ընտրություններում: Այս մասին կարդացէք համառօտ բացատրական գրությունը էջ 12-ում:

Ռ.Ս.

ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ՈՒ ԼՍՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ

Սուրէն Սուսայէեան

Մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների քարոզարշաւն արդէն հատել է, այսպէս կոչւած, հասարակածը, իսկ «ճանապարհի» երկրորդ կէսին քաղաքական այս մրցավազքի մասնակիցները հաւանաբար աւելի մեծ թափ կը հաղորդեն իրենց քարոզչութեանը:

Ընտրարշաւի պաշտօնական մեկնարկից (Ապրիլի 8-ից) ի վեր ութ կուսակցությունների եւ մէկ կուսակցությունների դաշինքի ներկայացուցիչները հսկայական ծաւալով տեղեկատւութիւն են ուղղել իրենց պոտենցիալ ընտրողներին՝ բանաւոր, գրաւոր կամ տեսաձայնային տարբերակով: Սակայն մեծ հաշւով բազմաթիւ մարդիկ չունեն ո՛չ ժամանակ, ո՛չ էլ ցանկութիւն այս բառակոյտերի զանգւածից հիմնականը զտելու: Ստորեւ ամփոփ ներկայացւած է տարբեր քաղաքական ուժերի ասելիքը եւ նրանց հասցէին հնչած հիմնական քննադատութիւնը (ըստ նոյն քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերի, հրապարակային ելոյթների, ՋԼՄ-ներում տեղ գտած հարցազրոյցների, յայտարարութիւնների եւ այլն):



Հայաստանի Հանրապետական Կուսակցութիւն



Մենք պատրաստ ենք փոխել եւ իրականացնել փոփոխություններ, մենք ուժեղ ենք, բայց սխալներ ընդունել գիտենք, մենք հաւա-

տարիւն ենք մնում ժողովրդավարական բարեփոխումներին եւ արագացնելու ենք համաշխարհային ճգնաժամից տուժած երկրի տնտեսութեան վերականգնման տեմպերը, մարդկանց կեանքն աւելի լաւը կը դարձնենք գիւղական համայնքներում եւ հոգ կը տանենք քաղաքաբնակ մարդկանց խնդիրների մասին, մենք աւելի շատ հնարաւորութիւններ կը ստեղծենք մասնաւոր ձեռներեցութեան, ինչպէս նաեւ

ՆԵՐ 2012



նոր, ժամանակակից աշխատատեղեր կը ստեղծենք տնտեսության մրցունակ ճիւղերում, ուզում ենք անցկացնել ազատ, արդար ու թափանցիկ ընտրություններ, որի արդյունքում մեր յաղթանակը մեզ աւելի վստահ կը դարձնի արտաքին մարտահրաւերներին դիմագրաւելու հարցում, այդ թւում եւ՝ դարաբաղեան կարգաւորման գործընթացում:



Դուք ամենաքիչ իրաւունքն ունէք փոփոխութիւնների մասին խօսելու, քանի որ վերջին հինգ տարւայ ընթացքում Ազգային ժողովում ունեցել էք բացարձակ մեծամասնութիւն եւ գործադիրում գերակշիռ ներկայութիւն: Ձեր ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը լիովին տապալել է, մարդիկ հիմա աւելի վատ են ապրում,

քան հինգ տարի առաջ, ոչ պակաս այն հանգամանքի պատճառով, որ դուք ձախողւել էք տնտեսական ճգնաժամի հետեւանքների յաղթահարման հարցում արդիւնքում ստանալով ահագնացող արտագաղթը: Չնայած ազատ, արդար եւ թափանցիկ ընտրություններ անցկացնելու ձեր խոստումների՝ ընտրողների քւէ ստանալու հարցում դուք շարունակում էք մեծապէս ապաւինել վարչական ռեսուրսին:

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւն



Իբրեւ իշխող կոալիցիայի անդամ ունեցել ենք սահմանափակ ազ-

դեցութիւն քաղաքական որոշումների կայացման գործում եւ հիմա ցանկանում ենք աւելի մեծ ներկայութիւն ապահովել՝ Ազգային ժողովում նոր կառավարութիւն կամ «իսկական» կոալիցիա ձեւաւորելու հնարաւորութիւն ստանալու համար: Ուզում ենք, որ մրցակցութիւնը վերադառնայ քաղաքական ասպարէզ: Երկիրը կառավարել գիտենք եւ կը ծառայենք մեր ժողովրդին: Ժողովրդի քւէին տէր կը կանգնենք ու եթէ կառավարութիւն ձեւաւորելու հնարաւորութիւն ստանանք, ապա մի քանի ամիսների, այլ ոչ թէ տարիների ընթացքում մարդիկ իրական փոփոխութիւններ կը զգան:



Որպէս իշխող կոալիցիայի անդամ դուք հաւասարապէս պատասխանատու էք տնտեսական եւ այլ



ուղորտներում ձախողումների համար: Եթե ցանկանում էիք փոփոխություն, ապա պետք է վաղուց իշխող կոալիցիայից դուրս եկած լինեիք ու դառնայիք ինստիտուցիոնալ ընդդիմություն: Դուք գաղափարախօսական յենքի եւ հասկանալի քաղաքականության պակաս ունեք ու հիմնականում ապաւինում էք ձեր առաջնորդի խարիզմային: Օգտագործում էք բարեգործությունը որպէս ընտրողների ձայները գրաւելու միջոց՝ առանց նոյնիսկ ընդունելու, որ այն ընտրակաշառքի ձեւերից մէկն է:

«Օրինաց երկիր» կուսակցություն



Չնայած իշխանությունում մեր սահմանափակ ազդեցութեանը, այնուամենայնիւ վերջին չորս տարիների ընթացքում մեզ յաջողել է շատ բան անել հասարակ մարդկանց կեանքը բարելաւելու համար թէ՛ մեր օրինաստեղծ աշխատանքով, թէ՛ գործադիրում մեր ունեցած դիրքերում: Ուզում ենք անել աւելի շատ ժողովրդավարական բարեփոխումների առու-

մով, բնակչութեան սոցիալական եւ տնտեսական վիճակը բարելաւելու, կրթութեան, առողջապահութեան, սոցիալական սպասարկման եւ այլ ոլորտներն աւելի որակեալ դարձնելու համար:



Դուք եղել էք, կաք եւ ընտրութիւններից յետոյ էլ կը մնաք Հանրապետականի «կոյր աղիքը»: Եթէ մարդիկ ուզում են իրենց քէն իշխանութեանը տալ, ապա ինչո՞ւ պետք է ընտրեն ձեզ, այլ ոչ թէ աւելի հզօր թւացող Հանրապետականին: Դուք գերագնահատում էք ձեր մասնակցութիւնը ձեր կողմից բարձրաձայնած ձեռքբերումների մէջ: Ժողովրդի շրջանում զանազան նւերներ բաժանելով՝ փորձում էք ստանալ նրանց ձայները, առանց նոյնիսկ ընդունելու, որ այն ընտրակաշառքի ձեւերից մէկն է:

Հայ Յեղափոխական Դաշնակցություն.



Մենք գոյութիւն ունենք արդէն աւելի քան մէկ դար եւ իսկական

քաղաքական ուժ ենք հանդիսանում: Եկէք ազատուենք ոչ հայրենասէր, «օլիգարխիկ» եւ յարմարողական կեցածք ունեցող Ազգային ժողովի պատգամաւորներից ու ձեւաւորենք իրական ազգային, ընկերվարական կառավարութիւն: Մենք կը բարձրացնենք նւագագոյն աշխատավարձը նւագագոյն կենսական զանբիւղի մակարդակի: Հայ-թուրքական արձանագրութիւնների տակից Հայաստանի ստորագրութիւնը պետք է յետ կանչւի:



Լիբերալ քննադատներն ասում են.

Դաշնակցութեան մօտեցումները տնտեսական եւ սոցիալական խնդիրներին աւելի շատ անբովարակաւ են, իսկ արտաքին ասպարեզում քաղաքականութեան կոշտացումը կարող է խորացնել երկրի մեկուսացումը:

«Ժառանգութիւն» /«Ազատ դեմոկրատներ»



Մենք գալիս ենք «սարեր շարժելու»: Եկէք կառուցենք նոր Հայաստանը նոր սերնդի քաղաքական առաջնորդներով՝ ասելով շնորհակալութիւն ու հրաժեշտ տալով «երեք նախագահներին»: Ժամանակն է, որ վերջապէս Հայաստանի պատմութեան մէջ առաջին անգամ անցկացւեն ազատ, արդար եւ թափանցիկ ընտրութիւններ, եւ նման ընտրութիւնների անցկացման պարագայում պատրաստ կը լինենք ընդունելու ցանկացած մէկի յաղթանակը: Մեր փոքրիկ խմբակցութիւնը խորհրդարանում

շատ գործեր է արել մարդկանց համար վերջին հինգ տարիների ընթացքում եւ վերստին քել ստանալու պարագայում կունենանք պատիւ ու պարտականութիւն ծառայելու ժողովրդին եւ լուծելու ազգի հարցերը: Հայաստանը չպետք է զիջի Ղարաբաղի կարգավիճակի հարցում, այլ պետք է ճանաչի Արցախի ինքնիշխանութիւնը եւ ամբողջականութիւնը, իսկ հայ-թուրքական արձանագրութիւնները պետք է յետ կանչել Աժ օրակարգից եւ վերանայել:

Որոշ քննադատներ ասում են. Ընտրողներին ուղղւած ձեր մեսիջը որոշ հարցերում այնքան էլ պարզ ու յստակ չէ, ձեր դաշինքը («Ժառանգութեան» եւ «Ազատ դեմոկրատներին» միջեւ) ստեղծել է յապշտապ, դուք աւելի խոշոր ընդդիմադիր ուժի ձայներ էք տանում՝ այդպիսով նպաստելով իշխանութեան գործին, իսկ Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի անկախութեան պաշտօնական ճանաչումն անմիջապէս կը յանգեցնի Ադրբեյջանի հետ նոր պատերազմի:

Հայ ազգային կոնգրես



Այս ներկայիս իշխանութիւնն աւագակապետութիւն է, այն պատրաստուում է կեղծել գալիք ընտրութիւնների արդիւնքները: Ոչ մի ձայն յանցաւոր ռեժիմին: Աժ-ում պատկառելի ներկայութիւն ստանալու դէպքում կը լծւենք անօրինական իշխանութիւնների կազմաքանդմանը՝ նախաձեռնելով նախագահ Սերժ Սարգսեանի պաշտօնազրկման գործընթացը, ինչպէս նաեւ կը նախաձեռնենք լայնամասշտաբ բարեփոխումներ տարբեր ոլորտներում, որ կանգնեցնենք ահագնացող արտագաղթը, որ մարդիկ էականօրէն զգան բարելաւումը ժողովրդավարութեան հարցում, երկրի սոցիալական եւ տնտեսական կեանքում, մարդու իրաւունքների եւ ազատութիւնների պաշտպանութեան ոլորտում եւ այլն: Մենք կամրապնդենք Հայաստանի դիրքերը արտաքին քաղաքականութեան ասպարէզում՝ ղարաբաղեան կարգաւորման վերաբերեալ բանակցային գործընթացում, ինչպէս նաեւ Թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորման հարցում:

Քննադատութիւն



Հիմնական քննադատութիւնը. Դուք ինքներդ էք ստեղծել այս ռեժիմի հիմքը 1991-1998 թւականների ձեր իշխանութեան օրօք:

Դուք էք հիմնել ընտրութիւնները կեղծելու արատաւոր գործելաոճը: Դուք կտրուկ ու յաճախակի փոխում էք «դաշնակիցներին», ուստի այլեւս չէք կարող դիտել որպէս վստահելի քաղաքական ուժ: Ղարաբաղեան հակամարտութեան եւ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման ձեր տեսլականն աւելի շատ պարտուողական է, քան փոխզիջումային:

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւն



70-ամեայ խորհրդային իշխանութիւնը երանելի ժամանակաշրջան էր հայ ժողովրդի պատմութեան մէջ: Այժմ էլ հայ ժողովրդից խլած ազգային հարստութիւնը պետք է վերադարձի իրական տիրոջը: Երկրում պետք է հաստատուեն սոցիալական հաւասարութիւն եւ արդարութիւն, պետութիւնը պետք է երաշխաւորի բոլոր մարդկանց աղքատութեան շեմից բարձր կենսամակարդակը եւ այլն:

Քննադատութիւն



Կուսակցութեան քարոզարշաւի ոչ ակտիւ լինելու պատճառով փաստօրէն քննադատներ չկան: Սակաւաթիւ քննադատներն ասում են, որ կոմունիզմը սնանկ գաղափարախօսութիւն է Հայաստանում, որ այն չի վայելում հասարակութեան զգալի մասի աջակցութիւնը եւ յատկապէս չի ընդունում մատաղ սերնդի շրջանում: Միեւնոյն ժամանակ ՀԿԿ-ի «ճանաչելիութեան» մակարդակը հասարակութեան լայն շրջանում մնում է շատ ցածր:

Հայաստանի Դեմոկրատական Կուսակցություն



Եկեք կառուցենք սոցիալիստական ու ժողովրդավարական պետություն: Պետությունը պետք է աւելի մեծ դեր ունենայ տնտեսության մէջ, որպէսզի ապահովի նրա աւելի մեծ արդիւնաւէտութիւնը եւ սոցիալական ուղղւածութիւնը: Հայաստանը չպետք է «նոր տէրեր փնտրի» Արեւմուտքում՝ վտանգելով իր ներկայիս դաշնակցային յարաբերութիւնները Ռուսաստանի հետ: Ժամանակաւոր ատորիտարիզմը կարող է օրհնութիւն լինել Հայաստանի նման երկրի համար, եթէ դա ուղղւած լինի աւելի երկարաժամկետ՝ ազգի բարգաւաճման հասնելու նպատակին:

Քննադատութիւն



Կուսակցութեան համեմատաբար ցածր քարոզարշաւային ակտիւութեան պատճառով փաստօրէն

գոյութիւն չունի: Սակաւաթիւ քննադատներն ասում են, որ կառավարութիւնն անարդիւնաւէտ կառավարիչ է եւ չպետք է խառնել մասնաւոր ոլորտի ձեռնարկատիրական հարցերում: Միայն կուսակցութեան առաջնորդն է վայելում «ճանաչելիութեան» որոշակի մակարդակ:

«Միաւորւած Հայեր» Կուսակցութիւն.

Մենք հանդիսանում ենք «երրորդ

ուժ», այլընտրանք թէ՛ գործող իշխանութեանը, թէ՛ ներկայ ընդդիմութեանը, ցանկանում ենք իրականացնել բարեփոխումներ, այդ թւում նաեւ՝ սահմանադրական, վերջ դնել արտագաղթին, լուծել սոցիալական, տնտեսական խնդիրները եւ այլն: Քննադատութիւն.

Փաստօրէն գոյութիւն չունի: Ոչ կուսակցութեան ղեկավարը, ոչ էլ միւս գործիչները լայն հանրութեանը յայտնի չեն:

ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ / ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ

Ընտրութիւններն իրականացւում են 2 ընտրակարգով՝ համամասնական եւ մեծամասնական:

Համամասնական ընտրակարգով քւէարկութեամբ որոշւում են կուսակցութիւնների վարկանիշները, որոնց համապատասխան էլ բաշխւում են, օրինակ, խորհրդարանական տեղերը: Այդ եղանակով խորհրդարան են մտնում միայն այն ուժերը, որոնք յաղթահարում են օրէնքով սահմանւած շեմը. Հայաստանում այն սահմանւած է 5%, Ռուսաստանում, Ուկրաինայում եւ Վրաստանում՝ 7%, եւ այլն:

Խորհրդարան չմտած կուսակցութիւնների ձայները բաշխւում են ընտրւած կուսակցութիւնների միջեւ՝ իրենց վարկանիշին համապատասխան:

Մեծամասնական ընտրութիւններում ընտրողները քւէարկում են որոշակի անձանց. ընտրւում է միայն ձայների պարզ մեծամասնութիւն ստացածը:

Հայաստանի Ազգային ժողովում պատգամաւորների ընդհանուր թիւը սահմանւած է 131, որից 90-ը ընտրւում է համամասնական, 41-ը՝ մեծամասնական ընտրակարգով:



ՀԱԿ-Ը ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՅՈՐԴՈՐԵԼ Է ՉԱՅՆ ԳՏԱԼ «ՅԱՆՃԱԽՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ»

Գայիանէ Սկրտչեան

Ընդամենը մօտ 40 էջմիածնեցի էր խիզախել ներկայ գտնւելու ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) հանրահաւաքին մի քաղաքում, որտեղ իշխանամետ ուժերն աւելի ամուր հիմքեր ունեն:

«Տասը հոգի, հարիւր հոգի թէ հազար՝ մենք հանդիպելու ենք ու մեր ասելիքն ասելու ենք: Ոչինչ, որ ձեզ նկարահանում են, ոչինչ, որ վաղն անհանգստացնելու են, ոչինչ: Սա մեր երկիրն է: Մենք պատրաստ ենք ցանկացած դժարութեան, ցանկացած արգելքի եւ մեր քարոզարշաւն անելու ենք», - յայտարարեց ՀԱԿ-ի անդամ, Հայոց համազգային շարժում վարչութեան նախագահ Արամ Մանուկեանը: ՀԱԿ-ի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը գործող իշխանութեան ամենամեծ յանցանքներից մէկը համարեց արտագաղթը՝ յայտարարելով որ «յանցաւոր ռեժիմի» օրօք երկրի բնակչութեան թիւը կրճատել է 1 միլիոնով: «Ձգալիօրէն կրճատել են բանակի թւակազմը: Մեր իշխանութեան օրօք բանակը կազմւած էր 78 հազար զինւորներից, տարեկան 26 հազար զօրակոչ էինք անում, հիմա բանակը հասել է 50 հազարի, զօրակոչը՝ 16 հազարի», - ասաց առաջին նախագահ եւ ՀԱԿ-ի առաջնորդ Տէր-Պետրոսեանը՝ յաւելելով, որ առաջին անգամ սեփական ժողովրդի վրայ կրակեց հենց այս իշխանութիւնը 2008-ի Մարտի 1-ին սպանելով տասը հոգու: Մանուկեանը

հայաստանեան քաղաքական դաշտն ամորձատուած համարեց, որտեղ որեւէ գաղափարախօսութիւն չի աշխատում: Ըստ նրա՝ իշխանութիւնն իր բռնի մեթոդներով մարդկանց բերելու է, եւ ընտրելու են: «Ընդդիմութիւնն էլ չի ներկայացնում ծրագրերը գաղափարական առումով: Մենք չենք կարող իրաւական ծրագիր ներկայացնել, որը կիրականանայ առանց իշխանափոխութեան: Թոշակների բարձրացման ծրագիր, բնականաբար, ունենք, բայց այն կապւած է իշխանափոխութեան հետ: Եթէ ԼՖՍԿը, Թոխմախը, Ալրաղացը զռփեն երկիրը եւ հարկ չվճարեն, թոշակի բարձրացման ծրագիրն անիմաստ է դառնում», - ասում է Մանուկեանը: Ըստ նրա՝ Աժ մտնելու դէպքում բարձրացնելու են նախագահ Սերժ Սարգսեանի իմփիչմենքի հարցը: «Որովհետեւ մեխը, արմատը, շան գլուխն էտտեղ է թաղած: Բոլոր ծրագրերը դու կարող ես իրագործել, եթէ աւագակապետութեան բուրգի վերելի մասը գլխատուած լինի», - ասում է նա: ՀԱԿ-ի ներկայացուցիչ, Հայաստանի նախկին վարչապետ Հրանտ Բագրատեանն էլ, քննադատելով երկրի տնտեսական քաղաքականութիւնը, նշեց, որ նախագահը շուկան բաժանել է մի քանի օլիգարխների միջեւ, ինչի պատճառով գոյութիւն չունի մրցակցութիւն, ինչն իր հերթին կը նպաստէր գների իջեցմանը: «Ինչու պէտք է մէկ հոգի ներկրի շաքարը, ձէթը, կարագը: Մենակ շաքար բերողի (հանրապետական Սամէլ Ալեքսանեան) չուած հարկերը հերիք ա թոշակները եռապատկելու: Տարեկան տղէն (Ալեքսանեանը) պետքիջէ չի վճարում 110 մլրդ դրամ (280 մլն դոլար), 10 մլրդ թուլափայ գցում ա բիւջէն, մենք ուրախանում ենք», - յայտարարեց Բագրատեանը: ՀԱԿ-ի անդամները նշեցին, որ այսօրայ իշխանութեան արատների համար շատ յաճախ մեղադրում են իրենց՝ յայտարարելով, որ ամէն ինչ իրենք են սկսել: «Ցոյց տւէք մէկին, ում թէ՛ տնտեսական ուժ ենք տւել, թէ՛ պաշտօն: Մենք եղել ենք իշխանութեան, հազար ու մի սխալ է եղել, բայց մենք ոչ կրիմիալ ու ոչ գող ենք եղել: Եթէ գող լինէինք, հիմա չէինք գայ ձեզ մօտ», - ասաց Բագրատեանը: ՀԱԿ-ի առաջնորդն էլ վստահեցրեց, որ անգամ վախի մթնոլորտում մարդիկ իրենց են ընտրելու՝ իշխանութիւններին դէմ քւէարկելով, իսկ ովքեր ձայն տան ՀՀԿ-ին ու ՕԵԿ-ին, իրենք էլ կը դառնան «յանցաւոր»: «Գիշեր-ցերեկ ձեզ թալանեն, ձեր երեխաներին տանեն բանակ՝ խաղաղ պայմաններում սպանեն, ձեր կաշին քերթեն, ձեզ հողից-տնից գրկեն եւ գան էլի ձեզանից ձայն խնդրե՞ն: Դրա համար եմ ասում՝ ոչ մի ձայն այս յանցաւոր իշխանութիւններին»:

Աղբիւր՝ «Արմենիանաւ»
armenianow.com

ՉՈԿԻԱԾ ԵՐԱՄԻՑ

Կոլիա Տեր Յովհաննիսեան

Նեղիկն աչքերը բացեց թյլ ճռճռոցի ձայնից եւ զգաց, որ սենեակում ինչ-որ բան այն չէ: Անորոշ տազմապով՝ նայեց շուրջը, բայց արտասովոր ոչինչ չնկատեց: Պառկած դիրքից երեւում էր գրասեղանի աթոռի թիկնակին անփութօրէն նետած սեւ գոյնի երեկոյեան իր շրջագգեստը, որ յիշեցնում էր երէկայ երեկոյթի տիան վերջաբանը. ի՞նչ յոյսերով էր ընտրել ու հագել այդ շրջագգեստը, ինչպիսի՜ հիացական հայեացքներ սեւեռւեցին իր վրայ, երբ Գոռի ուղեկցութեամբ մտաւ կարասկի սրահը: Բայց յետոյ... Չէ՛, այլեւս չի հագնի այդ չարաբաստիկ շրջագգեստը...

Նորից լսեց ճռճռոցի ձայնը՝ այս անգամ աւելի բարձր. Նեղիկն արագ աչքի անցկացրեց անկամոն շարւած գրքերով գրապահարանն ու պատից կախւած ընտանեկան լուսանկարները: Ամէն բան իր տեղում էր. նայեց վար. յատակին այսուայնկողմ ընկած էին բարձրակրունկ, սեւ, լաքէ կօշիկներն ու վանդակաւոր, նոյնպէս սեւ գուլպաները. սեւ, անթել կրծքկալը աթոռի տակ էր: Աչքն ընկաւ սենեակի անկիւնում մի քանի օր առաջ տպարանից բերւած ու իրար վրայ շարւած՝ իր հեղինակային առաջին, ծաւալուն վիպակի դեռեւս փակ կապոցներին: Բայց այս անգամ չզգաց այն ոգեւորութիւնը, որ ունենում էր դրանց հայեացք ձգելիս:

Երէկ, երբ զուգւած, զարդարւած պատրաստուում էր Գոռի հետ դուրս գալ տնից՝ տատն ասաց.

-Բալէս, գրող դարձար, արձար. հիմա կարգին մի բան սովո-



որի, որ աշխատես...

Նելլին լուռ մնաց: Երանի՛, այդքան հեշտ լինելի մի գրքով գրող դառնալն ու պրծնելը, «կարգին մի բան» սովորելով՝ աշխատանք գտնելը... Մայրը խեթ նայեց տատին, բայց Գոռի ներկայութեամբ՝ լռեց: Նելլին լաւ գիտեր այդ հայեացքի իմաստը, տատն իրեն մի բարի խօսք էլ ասէր մէկ է, մայրը հակաճառելու էր... Ինքը որքա՛ն էր յոգնել մօր եւ տատի անիմաստ առճակատումներից... Եղբայրն էլ այդ պատճառով բեզարած հեռացաւ տնից, մեկնեց արտասահման:

Գրականութիւնից ու աշխատանքից աւելի՛ մօրը հետաքրքրում էր աղջկայ անուսնութեան հարցը, ուստի նա առանձնապէս չխանդավառուեց նոր գրքով, վերցրեց, շուռուճուռ տուեց, նայեց շապիկին, բացեց, կարդաց առաջին էջը, որի վերելում, աջ անկիւնում, զեղեցիկ տառերով գրուած էր՝ «Նւիրում է թանկագին ծնողներին», եւ ասաց՝ «Ապրես»... Քուն էր՝ մօր համար էական չէր գրքի բովանդակութիւնը:

-Բա, որտե՞ղ ես տեղաւորելու սրանք, - միջանցքում անկանոն զետեղուած կապոցներն ակնարկելով՝ ասաց մայրը:

-Իմ սենեակում, մի մտածիր, մի բան կանեն...

-Դէ, գիրքդ էլ հրատարակեցիր, ապրես, -նորից ասաց նա, - հիմա ժամանակն է, որ լրջօրէն մտածես պսակելուդ մասին:

Յէնց այն, որ Գոռը հարուստ ընտանիքից էր, մայրը նրան յարմար թեկնածու էր համարում: Նելլին սիրում էր Գոռին, բայց երբեմն վրդովուում էր նրա զանազան հարցերի նկատմամբ դրսեւորած, ցինիկութեան հասնող անտարբերութիւնից: Նելլին համոզուած էր, որ Գոռին՝ կեանքում հրապուրում են լոկ հաճոյքներն ու իր խնդրում աւելի շատ... արտաքին գրաչութիւնը: Ճիշտ է, գրքի տպագրութեան ծախսի մի մասը, հօրից

զաղտնի, յանձն առաւ Գոռը, բայց Նելլին վստահ չէր, թէ միայն սերն էր նրան այդ քայլին մղող դրդապատճառը:

Յայրն աւելի հանգամանալից տնտղեց գիրքը, նոյնիսկ հոտոտեց, ասաց՝ «Ապրես» եւ իր բոլոր սնամէջ խոստումների շարքին՝ նաեւ աւելացրեց.

-Կը կարդամ, ժամանակ գտնենմ, անպայման կը կարդամ, իսկ ի՞նչ ես կարծում, գրքի վաճառքից մի բան կը մնա՞յ...

Ամէն անգամ, Նելլին հազիւ էր իրեն զսպում չպարսաւելու հօրը, այդ անիծեալ «ժամանակ գտնենմ»-ի պատճառով, չէ՞ որ, աշխատանքից տուն գալուց յետոյ հօր ժամանակի մեծ մասը վատնուում էր հեռուստացոյցի առջեւ: Նա մինչեւ անգամ «ժամանակ չէր գտնում» արծագանքելու իր մօր ու կնոջ յաւիտենական լեզակռիւններին, որոնք երբեմն վերածուում էին կանացի հիստերիկ ճղճղոցների: Նման պահերին, աջ ձեռքի մատերով, դաշնամուր նւագելու պէս, նա տենդագին հարւածում էր խումացած բազմոցի թելին կամ լուռ հեռանում էր տնից ու վերադառնում շատ ուշ՝ թեթեւ օրօրւելով...

Գոռն ասաց.

-Յա՛, տատիկ ջան, ես էլ եղ եմ ասում, հիմա ո՞վ է գիրք կարդում...

Նա եւս լուրջ չէր վերաբերում Նելլիի գրական աշխատանքներին, բայց Նելլին քաջ գիտէր, որ տւեալ պահին խնդիրը դա չէր, նա ուղղակի փորձում էր սիրաշահել տատին:

-Յա, բալէս, համոզիր եղ աղջկան՝ թող խելքը գլուխը հաւաքի...

Պարզուում է՝ իր բանասիրական կրթութիւնը կարգին կամ խելքը գլխին բան չի եղել, իսկ գիրք հրատարակելը՝ միայն աւելորդ ծախս, որի կապակցութեամբ ինչքա՛ն խօսակցութիւններ ու վէճեր եղան տանը:

Ուզեց վեր կենալ, բայց ծուլա-

ցաւ. շրջւեց դէպի պատն ու յանկարծ պարզորոշ լսելով ճռճոցի ձայնը՝ ցնցւեց, ընդոստ շուռ եկաւ մէջքին ու ակամայ նայեց վեր: Նելլին թւաց, թէ առաստաղը մասամբ ցած է իջել: «Ես ինչե՛ր են անցնում մտքովս, երեւի խենթանում եմ», մտածեց իւրովի...

Գոռն եկել էր իր յետեւից հօր մեքենայով՝ վարորդի ուղեկցութեամբ, հայրը թոյլ չէր տալիս մեքենայ վերցնել այն օրերին, երբ տղան պիտի խմէր, իսկ խմելիս նա յաճախ կորցնում էր ինքնատիրապետումը. մի երեւոյթ, որը թէեւ յղի չէր արտառոց արարքներով, բայց հունից հանում էր Նելլին: Ճանապարհին Գոռն ասաց.

-Ականջ մի՛ դիր, պառաւ կնիկ է, պառաւները փնթփնթան են լինում, հիմա գնում ենք պարելու, մոռացիր:

Ինքը լուռ մնաց, որովհետեւ հակառակ տատի վերաբերմունքին՝ նախ իրեն դուր չէկաւ տղայի հեզնական տոնը, որովհետեւ տատը փնթփնթան պառաւ չէր, եւ երկրորդ՝ ինքը քաջ գիտէր Գոռի մարդկանց յիմարացնելու, երբեմն քծնանքի հասնող յատկանիշը, որը Գոռը բացատրում էր՝ «ինչ կայ որ, թող մարդն իրեն լաւ զգայ» նշանաբանով... Արդեօք, ինքն էլ Գոռի հերթական «զոհեցից» մէկը չէ՞ր... Ոչ, նա համոզուած էր, որ Գոռը սիրում է իրեն ու նրա սիրոյ բուռն խոստովանութիւններն անկեղծ էին... Նելլին զգում էր, որ իր լռութիւնն ու վրդովմունքը նետարդայնացնում են Գոռին, բայց ոչինչ չէր անում դրութիւնը նորմալացնելու ուղղութեամբ: Նոյնիսկ ընդդիմացաւ, երբ Գոռը թեքելով՝ փորձեց իրեն համբուրել: Մեքենայի հայելու մէջ, Նելլին մի պահ որսաց ծանօթ վարորդի հայեացքն ու կոպտօրէն հեռացրեց ծնկի վրայով սահող Գոռի շարժում մատերը:

- Լաւ էլի, -ասաց Գոռը, -համը հանում ես...

Յարցը միայն տատի ասածը

կամ ծնողների վերբերմունքը չէր. մի քանի օր առաջ գրական խմբակում իր գիրքը քննարկելիս, Սոնան, որ, ի դեպ, անտարբեր չէր Գոռի հանդեպ, հանդես եկաւ անողոք քննադատութեամբ, վիպակը համարեց գրական արժեքից զուրկ ու ինչ բերանը եկաւ ասաց: Ոչ ոք, նոյնիսկ նրանք, ովքեր նախապէս հիացական խօսքեր էին շռայլել, չդիմակայեցին սուր քննադատութեանը. դեռ աւելին, ոմանց դէմքերին պարզ ուրազձեւ էր թաքուն հրճանքի մի արտայայտութիւն, որ սովորաբար մարդիկ ունենում են մէկի հասցէին քննադատական խօսքեր լսելիս: «Զգիտե՛ ով է անկեղծ, ով կեղծաւոր», անցաւ մտքով. ինքը միշտ մեծ հաւատք էր ընծայել իր բոլոր ընկերներին եւ ահա՛ արդիւնքը... Նելլին գրական հաւաքից հեռացաւ ընկճւած տրամադրութեամբ, որի պատճառն, անշուշտ, միայն Սոնայի քննադատութիւնը չէր...

Մեքենայի մէջ, նա ուզեց այդ մասին պատմել Գոռին. այնպէս էր ուզում սիրտը բացել, կիսել մէկի հետ: Բայց անմիջապէս հրաժարեց այդ մտքից. ո՛ւմ, ո՛ւմ, Գոռին ամենեւին չէին հետաքրքրում նման «մանրութիւնները», եւ յետոյ, Նելլին չէր ուզում տալ Սոնայի անունը, թէւ միտքը հանգիստ էր, որովհետեւ Գոռն էլ բոլորի պէս տեղեակ էր, որ Սոնան կապեր ունի անւանի մի գրողի հետ, ում շնորհիւ էլ տպագրուում է գրական հեղինակաւոր պարբերականներում... Նա անյոյս ձեռքը թափ տւեց ու ասաց.

-Ինչ է, չէ՞նք կարող տաքսիով գնալ...

Գոռը ծիծաղեց ու ասաց.

-Էդ հօրս ասա, բիծուկին բան հասկացնել չի լինում...

Վարորդն էլ ծիծաղեց: Երբ տեղ հասան, Գոռը արձակեց նրան.

-Արտօ ջան, դու գնա, մենք ինքներս կը գանք...

Այնուամենայնիւ, պարահրա-

պարակ մտնելիս ու տրւելով պարին՝ Նելլիի տրամադրութիւնը կտրուկ փոխեց: Պարելիս նա մոռանում էր ամէն բան, աշխարհը... Լաւ տրամադրութեանը նպաստեցին նաեւ գինին ու ականջ խլացնող երաժշտութիւնը, որ ուրիշ դէպքում անտանելի կը թւար: Նոյնիսկ հանդիպելով Սոնային՝ բարեւեց ժպտալով, ասես ոչինչ չէր պատահել...

Ճոճոցը կրկնեց. Նելլին նայեց վեր ու շշմեց: Իրօք, առաստաղը աւելի ցածր էր իր սովորական բարձրութիւնից: «Հաստատ, աչքիս է երեւում», համոզեց ինքն իրեն: Սենեակը ցուրտ էր. դժարանում էր բաժանել տաք անկողնուց... Տրամադրութիւն էլ չունէր վեր կենալու. ի՞նչ ունէր անելու, իրեն սպասում էին միայն տան գործերն ու երեւի Գոռի չդադարող հեռախօսազանգերը...

Տարւած ընկերուհիների հետ զրոյցով նա ուշ նկատեց նրա բացակայութիւնն ու սկսեց աչքերով փնտրել. Գոռը հաստատ սրահում չէր: Ինքն էլ աննկատ դուրս սահեց ու միջանցքի կիսամութ անկիւնում տեսաւ Գոռին Սոնայի հետ գրկախառնուած՝ կրքոտ համբուրելիս... Չէր յիշում, թէ ինչ զգաց այդ պահին, գուցէ՛ ոչինչ... Մեխլած տեղում, հետաքրքրութեամբ նայում էր աշխարհից վերացած համբուրող զոյգին: Ասես տղան Գոռը չէր, աղջիկն էլ՝ Սոնան չէր: Յիշում էր միայն, որ ծնկներում սաստիկ թուլութիւն զգաց: Նրանք չնկատեցին իրեն: Մի պահ ուզեց աւելի մօտենալ, բայց փոշմանեց: Նելլին չէր հասկանում, թէ ինչո՞ւ հիմա անդադար միայն այդ պատկերն է աչքի առջեւ ու իրեն չի յաջողում դա ջնջել յիշողութեան պաստառից. Գոռի ձեռքերը քանի՞ անգամ էին շոյել իր մազերը, դէմքը, կուրծքը... Չէր յիշում, թէ ինչպէս մենակ դուրս եկաւ կարօկից, նստեց առաջին պատահած տաքսին, անջատեց բջջայինը, հասաւ տուն, անխօս անցաւ

իր սենեակը, հանեց՝ դէսուդէն նետելով շորերը, հագաւ գիշերանոցն ու պառկեց...

Ճոճոցի ծայրը սաստկացաւ: Նելլին չգիտէր, արդեօք, այդ առաստաղի եզրագի՞ծն է ցած գալիս, թէ՞ պատերն են չորս կողմից կարճանում հաւասարապէս... Մի բան ակնյայտ էր, որ սենեակը փոքրանում ու հետզհետէ մթնում էր... Ճոճոցի ծայրը փոխեց ուժեղ ճայթիւնի ու շարունակական դողոցի՝ խլացնելով Նելլիի թոյլ բղաւոցը: Առաստաղի եզրագիծը հասաւ ընտանեկան նկարներին, որոնք բոլորն էլ անհետացան մի քանի վայրկեանի ընթացքում: Եւ մինչ, սենեակի միակ լուսամուտը, վարագոյրով հանդերձ, ամբողջովին կուլ կը գնար առաստաղին՝ Նելլին հասցրեց տեսնել, թէ ինչպէս փշուեցին գրապահարանն ու աթոռը, ուժեղ ճնշման տակ՝ քանդուեցին կապոցների թելերը, գրքերը ճզմեցին կամ ցրիւ եկան յատակին...

Առաստաղը յամառօրէն իջնում ու մօտենում էր իրեն... Բայց... որքան ահագնանում էր մօտալուտ վտանգը, այնքան նւազում էր Նելլիի սարսափը՝ տեղի տալով երանութեան մի անծանօթ զգացումի... Վերջին պահին, ձեռքերը բարձրացրեց վեր՝ ասես ավերի օգնութեամբ փորձելով կասեցնել առաստաղի անարգել գահավիժումը, գլուխը թեքեց կողքի ու թեքւած այտի եւ մարմնի վրայ զգաց առաստաղի ողջ ծանրութիւնը. «Իսկ ես չէի հաւատում, կարծում էի աչքիս է երեւացել»... Նելլին քմծիծաղեց ու փակեց կուպերը...

Մարտ, 2012

ԼԻԼԻԹ ՊԻՊՈՅԵԱՆ

ԵՐԱՇՏՆ ԹԷ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

*Հարցազրույցը վարեց՝
Լիլիթ Ամիրխանյան*



Լիլիթ Պիպոյեանը մեր իրականության իւրօրինակ հեղինակ-կատարողներից է: Լինելով պրոֆեսիոնալ երաժշտության ասպարեզում նա մասնագիտութեամբ ճարտարապետ է, ինչպէս նաև արդէն եօթ տարի է դասախօսում է Երեւանի պետական համալսարանի արեստարանութեան բաժնում: Մեր զրոյցը երգչուհու հետ ընթացաւ նրա տանը, որտեղ տիրում էր արեստով լի տաքուկ տրամադրութիւնը:

- Դասախօս, ճարտարապետ, երաժիշտ: Կա՞յ այս երեք բնագաւառներից որեւէ մէկը, որն առաւել հոգեհարազատ եւ առաջնային է Ձեզ համար:

- Հիմա այնպէս է ստացւել, որ երաժշտութիւնն առաւել գերակշռող է դարձել իմ գործունէութեան մէջ: Եւ ես մտածում եմ այս տարի աւարտել իմ աշխատանքը համալսարանում եւ լիովին նւիրւել երաժշտութեանը: Բացի այդ ստեղծագործական աշխատանքը միշտ աւելի հետաքրքիր է:.. Դասախօսի աշխատանքն իմ բնաւորութեանը այնքան էլ չի համապատասխանում: Իսկ այն ուղորտում, որտեղ ես աշխատում եմ մենակ՝ ինձ վրայ աւելի լաւ է ազդում: Դրա համար էլ գերակշռողն ու առաւել հոգեհարազատը երաժշտութիւնն է:

- Այն մարդուն, ով ծանօթ չէ Ձեր երաժշտութեանը ինչպէ՞ս կը բնութագրէք Ձեր երգարեստը:

- Իմ երաժշտութիւնը, ոմանք կոչում են քաղաքային ֆոլկլոր, չնայած ես այնքան էլ համաձայն չեմ, որովհետեւ ընդհանրապէս ֆոլկլոր

ընթացում է ինչ-որ չափով ոչ պրոֆեսիոնալ գործունէութիւն, իսկ ես ինձ համարում եմ պրոֆեսիոնալ: Ժանրային իմաստով կարելի է բնորոշել որպէս ռոմանսային, դասական-կամերային երաժշտութիւն ջազային էլեմենտներով: Փորձում եմ գտնել այնպիսի երգեցողութեան մաներա, երաժշտական մթնոլորտ, որն իր մէջ կը միաւորի ժամանակակիցը եւ աւանդականը, կը ձուլի դրանք միմեանց հետ այնպէս, որ այդ միաւորումը լինի օրգանական, ոչ արհեստական: Ես հիմնականում երգում եմ հայ կնոջ անունից, որն ապրում է 21-րդ դարում, որը գիտակցում է իր կանացի լինելը, հայ լինելը, ժամանակակից լինելը, ով միաժամանակ գիտի իր մշակութային արմատները:

- Ձեր երգարեստը ժանրային առումով շատ բազմազան է, կը բնութագրէ՞ք Ձեր երաժշտութեան զարգացման, փոփոխման ընթացքը:

- Սկսել եմ շատ պարզ նւագակցութեամբ, քանի որ ունեմ նաեւ դաշ-

նակահարի կրթութիւն, կիթառ նւագել սովորել եմ ինքնուրոյն եւ ոչ շատ կատարեալ չափով: Սկզբում նւագակցել եմ դաշնամուրով կամ կիթառով, բայց ես զգում էի, որ իմ նւագակցութիւնը այն մակարդակի չէ, որը ես կուզեմայի ունենալ: Եթէ լինէի վիրտուոզ կիթառահար միգուցէ ես մնայի հէնց այդ մի գործիքով, բայց քանի որ ես չէի կարող ստանալ այն ինչ ուզում էի, ես որոշեցի անել գործիքաւորումներ լարային քառեակի համար, հրաւիրել պրոֆեսիոնալ երաժիշտների՝ ջութակահար, թաւջութակահար, ալտահար ու իրենց հետ էլ ելոյթ ունենալ: Սկզբնական շրջանի իմ երգերը հէնց այդ երեք գործիքների համար են գրւած, յետոյ կամաց կամաց սկսեցի ընդլայնել, աւելացաւ ֆլէյտան, հարւածային գործիքները աւելի ռիթմիկ ստեղծագործութիւնների համար, մի քանի տարւայ իմ համերգի ժամանակ տաւիղ օգտագործեցի եւ ինձ հետ արդէն 12 հոգանոց փոքրիկ նւագախումբ էր նւագում: Իսկ ես վերջերս, համակարգչային հնարաւորութիւնները օգտագոր-

ծելով ես արդեն ունի իմ ձեռքի տակ ցանկացած գործիքի ձայն, որոնք կոչուում են ցեմալերային ձայներ: Այդ ձայներն ստեղծել են իրական գործիքները ձայնագրելով, իրական գործիքների արձակած հնչիւններ են, բայց երբ դրանք նւագում ես ստեղնային գործիքի վրայ մաներան իրեն մատնում է: Ոչ նուրբ ականջը իհարկէ չի տարբերի, որ դա ցեմալերային ձայն է, իսկ աւելի նուրբ ականջը կը հասկանայ, որ օրինակ կիթառը այսպէս չէր կարող հնչել, եթէ իրականում կիթառիստը նւագէր: Տեխնոլոգիաները ստեղծագործական լայն հնարարութիւն ու ազատութիւն են տալիս եւ ես հիմա մի ամբողջ ծրագիր այդպէս եմ հաւաքել: Իմ հերթական սկաւառակը կը լինի էլեկտրոնային երաժշտութեամբ, որտեղ ընդգրկած կը լինեն հին երգերի շատ հետաքրքիր, իւրօրինակ, մի տեսակ տարբերող մշակումներ: Ոչ այն մշակումներից, որոնց մենք սովոր ու ծանօթ ենք:

- Կրկին միջնադարեան երգերի մշակումներ են լինելո՞ւ:

- Չէ միջնադարեան չեն, ժողովրդի կողմից ստեղծած երգեր են, բայց չեն կարող ասել որ ժամանակաշրջանի, սակայն ուզում եմ անպայման ընդգծել, որ շատ իւրօրինակ են, ես դրանք մեծ դժարութեամբ եմ գտել՝ երկար փնտրելուց յետոյ: Հետաքրքիր խառակտերի երգեր են՝ մի տեսակ բալլադային երանգաւորումով:

- Դասախօսում էք Պետհամալսարանում ճարտարապետութեան հիմունքներ եւ Անտիկ արւեստ, սիրո՞ւմ էք դասախօսի աշխատանքը: Ի՞նչպիսին է այն ուսանողութիւնը, ում հետ շփում էք ունենում:

- Ինձ համար ամէն ինչում՝ ներառեալ աշխատանքում, շատ կարեւոր են անձնական յարաբերութիւնները: Ես դժարութեամբ եմ

տանում այն փաստը, որ համալսարանի դասախօսը անձնապէս համարեա չի առնչուում իր ուսանողների հետ, չի ճանաչում նրանց ու էնոցիոնալ կապ չի ստեղծում դասախօսի ու ուսանողի միջեւ: Այդ առումով ես աւելի շատ կը նախընտրէի լինել դպրոցի ուսուցչուհի, որտեղ տարիներ շարունակ աշխատում ես, արդէն գիտես աշակերտիներին ու նրանց հետ անձնական կապի մէջ ես գտնուում: Դա իմ տեսակին աւելի մօտ է, քան համալսարանական անանձնական շփումը: Դա է պատճառը, որ ինձ այնքան էլ լաւ չեմ զգում դասախօսի դերում: Շատ թերութիւններ կան նաեւ համալսարանական կրթական համակարգում: Ինձ համար անընդունելի է, որ արւեստաբանութեան բաժին ընդունուում են մարդիկ, ովքեր այդտեղ չեն ուզում սովորել, այլ յայտնել են քանի որ իրենց ցանկացած բաժնն ընդունելու համար բաւարար միւլտիպլեր չեն հաւաքել:

- Ի՞նչ ազդեցութիւն է ունեցել ձեր շրջապատը, ընտանիքը, ընկերները ձեր ձեւաւորման եւ հետագայ գործունէութեան վրայ:

- Ընտանիքը հսկայական, ես կասեի ահռելի նշանակութիւն է ունեցել, մեծ նշանակութիւն է ունեցել նաեւ դպրոցը: Հայրս նկարիչ էր, մայրս՝ տնտեսագէտ: Իր տնտեսագէտի մասնագիտութեամբ հանդերձ նա շատ էր սիրում արւեստն ու երաժշտութիւնը: Հետեւեց, որ ես ու եղբայրս երաժշտական կրթութիւն ստանանք: Իսկ հայրս նկարիչ էր, իր տեսակով անզուգական, փիլիսոփայ մի մարդ: Ամբողջ կեանքում բոլոր տղամարդկանցից ամենաշատը սիրահարած եմ եղել հօրս: Միշտ փնտրել եմ իր նման մէկին: Մայրս շատ գրագէտ, կազմակերպած, ուշադիր մի կին էր, ով հետեւում էր մեր ներդաշնակ զարգացմանը: Իսկ հայրս մեզ տալիս էր ներքին ազատութեան զգացողութիւն ու միշտ

այդ մասին շեշտում էր: Մեր տանը զրոյցները երբեք չեն եղել ինչ-որ մակերեսային թեմաների շուրջ կամ փողային հարցեր լուծելու վերաբերեալ: Հօրս հետ զրոյցներ էինք ծաւալում ընդհանրական, խոշոր թեմաների շուրջ, որոնք կարող էին խորանալ, խորանալ, խորանալ, շատ խորքերը հասնել... Ես ներկայ եմ եղել իր ընկերական շրջապատի հետ հանդիպումներին եւ իմ մէջ դրանք շատ են տպաւորել, յիշում եմ, թէ ինչպէս էին նկարիչներով հաւաքած զրուցում, խօսում տարբեր հետաքրքիր թեմաներից: Իսկ դպրոցը... Ես աւարտել եմ N 71 դպրոցը, մեր դպրոցի ուսուցիչների գրեթէ 50%-ը տղամարդիկ էին, այնպէս չէր, որ մեզ միայն կանայք էին կրթում, դա շատ կարեւոր է: Շատ հետաքրքիր եւ զարգացած ուսուցիչներ ունէինք... Դպրոց գնացել եմ հաճոյքով եւ միշտ անհամբեր սպասում էի ամառային արձակուրդի աւարտին, երբ պէտք է դասերը սկսեն: Ես սիրում էի սովորել եւ դրանից հաճոյք էի ստանում, հետաքրքիր էր: Պատմութիւն չեմ սիրել, որովհետեւ պատմութիւնը փաստերի, տարեթւերի, իրադարձութիւնների անդէմ շարան էր, որի մէջ չկային մարդիկ իրենց բնաւորութիւններով, խառակտերներով: Միգուցէ մեր ուսուցիչը չի կարողացել մեզ նիւթը հետաքրքիր մատուցել կամ միգուցէ դա սովետական չոր-ցամաք ներկայացւած պատմագրութիւնն էր, մի տեսակ մոնօտոն տարեթւերի գիծ էր, գեղարւեստական սիւժէ չէի զգում, չէի տեսնում, դրա համար էլ ահաւոր անտարբեր էի պատմութեան հանդէպ, թէեւ բազմիցս փորձել եմ հասկանալ, մտնել այդ իրադարձութիւնների մէջ, քանի որ գտնում եմ, որ իւրաքանչիւր զարգացած անձնաւորութիւն պէտք է իմանայ պատմութիւն՝ յատկապէս իր երկրի պատմութիւնը:

- **Ճարտարապետական առումով ձեր կարծիքը մերօրեայ երեւանի մասին: Շատերը կողմ են նորակառոյցներին, ոմանք էլ ձգտում են պահպանել հինը: Որի՞ն էք դուք կողմնակից: Վերջիվերջոյ մեզ պէտք չէ՞ նոր ճարտարապետութիւն, որը կը լինի անկեղծ ու համահունչ մեր քաղաքի կոլորիտին:**

